ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀՐԱՄԱՆ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԽՈՍՆԱԿ ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ և 27-րդ հոդվածների, ինչպես նաև 21-րդ գլխի պահանջներով,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) նախագահի՝ «Հայկ Հակոբյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին» 16.10.2015թ. թիվ 195-Ա հրամանը,

հաշվի առնելով այն, որ նշված հրամանի 2-րդ կետով Հայկ Հակոբյանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու լիազորությունը վերապահվել է Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

* * *

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու հիմքը.</u>**

Պալատի նախագահ Արա Զոհրաբյանի կողմից 16.10.2015թ. ընդունվել է «Հայկ Հակոբյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու մասին» թիվ 195-Ա հրամանը (**այսուհետ՝ Հրաման**), որով՝

1. ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

2. ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին հանձնարարվել է իրականացնել Հայկ Հակոբյանի նկատմամբ կարգապահական վարույթ՝

- ***Հայկ Հակոբյանից և հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանից պահանջել գրավոր բացատրություն սույն հրամանում նշված փաստերի վերաբերյալ.***
- ***լուծել Հայկ Հակոբյանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու հարցը:***

Հրամանի ընդունման և կարգապահական վարույթի հարուցման համար հիմք է հանդիսացել Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի կողմից xnews.am լրատվական կայքում ***06.07.2015թ. «Փաստաբաններն իրարից***

29 հոկտեմբերի 2015թ.
թիվ 206-Ա

հաղթանակնե՞ր են «գողանում»» վերտառությամբ և ***30.07.2015թ. «Ո՞րն է այն շարժառիթը, որ ստիպում է նախկին ամբաստանյալին պատժել իրեն պաշտպանած հանրային պաշտպանին»*** վերտառությամբ հոդվածների հրապարակման հետ առնչություն ունենալու վարքագիծը ստուգելու անհրաժեշտությունը:

* * *

2. <u>Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի բացատրությունը.</u>

Հաշվի առնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի պահանջը, ինչպես նաև Հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հրամանում նշված փաստերի վերաբերյալ Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանից գրավոր բացատրություն է պահանջվել:

Հայկ Հակոբյանը 26.10.2015 թվականին ներկայացրել է գրավոր բացատրություն, որով հայտնել է, որ կապ ունի ծանուցման մեջ մատնանշված հոդվածների հրապարակմանը օժանդակելու հետ:

Հայկ Հակոբյանը նշել է, որ 2015թ. հուլիս ամսի սկզբին իրեն է զանգահարել Սյունիքի մարզի հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանը և խնդրել է, որ իրեն օգնի մամուլում իր դիրքորոշումն ինչ-որ գործի շուրջ հայտնելու հարցում:

Հայկ Հակոբյանը նշել է, որ այդ գործի մասին կարդացել էր ամենօրյա մամուլի մոնիտորինգ կատարելիս, ինչպես հետո պարզել է, pastinfo.am կայքում: Այնտեղ խոսվում էր զինվորական գործով մի մեղադրյալի մասին, ում վերաքննիչ դատարանը արդարացրել էր: Հոդվածում խոսվում էր, որ այդ մեղադրյալին պաշտպանել են փաստաբաններ Լուսինե Սահակյանն ու Երվանդ Վարոսյանը:

Հայկ Հակոբյանը նշել է, որ իրեն զանգահարած Լիանա Գրիգորյանը խնդրել է օգնել նրան իր դիրքորոշումը հասցնել հասարակությանն ու փաստաբանական համայնքի մյուս գործընկերներին: Խոսքը *«Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են «գողանում»»* հոդվածի նախապատմությանն է վերաբերում:

Հայկ Հակոբյանը հայտնել է, որ խորհուրդ է տվել Լիանա Գրիգորյանին նյութ պատրաստել և ուղարկել իրեն՝ այն նկատառումով, որ կկարողանա խնդրել գործընկերներից մեկին այդ հոդվածը տեղադրել որևէ լրատվական կայքում: Հայկ Հակոբյանն իր գործընկեր Փայլակ Ֆահրադյանին խնդրել է դա անել, քանի որ նա իրավական թեմաներով նյութերով միշտ հետաքրքրված է եղել:

Ըստ Հայկ Հակոբյանի բացատրության՝ Փայլակ Ֆահրադյանն իրեն դեռևս տարվա սկզբին տեղյակ էր պահել, որ բացի այն, որ աշխատում է Գալա հեռուստաընկերությունում, նաև սպասարկում է xnews.am կայքը, որն ըստ Փայլակ Ֆահրադյանի խոսքի՝ կապ ունի ազգային ժողովի պատգամավոր Տիգրան Ուրիխանյանի հետ:

Հայկ Հակոբյանը հայտնել է, որ առաջին հոդվածի կառուցվածքը, այդ թվում՝ նախաբանը և վերնագիրը պատրաստել է Փայլակ Ֆահրադյանը, որն իրեն է փոխանցվել, իսկ ինքն այդ նյութի մեջ տեղադրել է Լիանա Գրիգորյանի կողմից ուղարկված ֆեյսբուքյան բանավեճի խոսքերը:

Հայկ Հակոբյանը նաև նշել է, որ Լիանա Գրիգորյանի նյութի մեջ արտառոց կամ վիրավորական բան չի տեսել, քանի որ նյութի մեջ մեջբերված են եղել ֆեյսբուքյան հարթակում կատարված գրառումները: Ըստ մամուլի խոսնակի՝ նյութի հեղինակները պարզ երևում էին:

Հայկ Հակոբյանը նաև նշել է, որ բարոյական տեսանկյունից արդար չի համարել Լիանա Գրիգորյանի դեմ Երվանդ Վարոսյանի դեմարշը և, պարզից էլ պարզ էր, որ հեռավոր մարզում աշխատող փաստաբանին հաստատ դժվար է լինելու մեդիա դաշտում ապացուցել, որ ինքը ճիշտ է: Հայկ Հակոբյանը նշել է, որ զուտ դա է եղել իր մոտիվը օգնել հեռավոր մարզի կին փաստաբանին, ով նաև փաստաբանների պալատի աշխատակից է:

Մամուլի խոսնակը նաև նշել է, որ այս նյութի հետ կապված Պալատի նախագահ Արա Զոհրաբյանին չի տեղեկացրել, քանի որ մեդիա ոլորտում տեղի ունեցող ոչ բոլոր հարցերն է սովորաբար ներկայացրել. Օրինակ՝ իր պաշտոնավարման օրոք շուրջ 30 մամուլի ասուլիսներ է կազմակերպել տարբեր փաստաբանների համար և՛ Պալատում, և՛ մամուլի այլ ակումբներում, իսկ այդ ասուլիսների մասին, միայն տարվա վերջում է գրավոր տեղեկանք կազմել և ներկայացրել Պալատի նախագահին:

Մամուլի խոսնակը նշել է, որ իր առջև դրված է եղել խնդիր՝ օժանդակել փաստաբաններին, ինչը նա արել է: Հայկ Հակոբյանը նշել է նաև, որ Նիկոլայ Բաղդասարյանին նա է օժանդակել Վարդան Պետրոսյանի գործով առաջին մամուլի ասուլիսը կազմակերպելու հարցում, որն անցկացրել են «Պոստ Սկրիպտում» ակումբում:

Որոշ ժամանակ անց լրատվամիջոցներում տարածվել է Լիանա Գրիգորյանի դեմ վարույթ հարուցելու խնդրանքով Արմեն Ավանեսյանի տարածած հայտարարությունը՝ ուղղված ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանին:

Այդ ժամանակ Լիանան կրկին կապնվել է Հայկ Հակոբյանի հետ, հուզված ասել է, որ չի գնահատվում իր կատարած աշխատանքը, չէ՞ որ ինքն է գրել վերաքննիչ բողոքը:

Ըստ Հայկ Հակոբյանի բացատրության՝ Լիանա Գրիգորյանն ասել է իրեն, որ Երվանդ Վարոսյանն իր ֆեյսբուքյան պատին Լիանա Գրիգորյանին ու նյութի տակ լայք դրված անձանց շատ վատ վիրավորանքներ է հասցրել: Ընդհուպ կին փաստաբան է լայք դրել, մինչդեռ Երվանդ Վարոսյանը գրառել է «ինձանից հղիները լայքադրսևորվում են» արտահայտությունը:

Հայկ Հակոբյանը նշել է, որ Լիանա Գրիգորյանը շատ վիրավորված է եղել և ասել, որ ինքն էլ է բողոք կազմել Պալատ ներկայացնելու համար ու ցանկանում է, որ նույն կարգով իր բողոքն էլ հրապարակվի մամուլում, ինչին ի պատասխան՝ Հայկ Հակոբյանն առաջարկել է նյութն ուղարկել: Լիանա Գրիգորյանն ուղարկել է իր բողոքը, Հայկ Հակոբյանը կրկին դիմել է Փայլակ Ֆահրադյանին՝ խնդրելով նաև վերջինիս, որպեսզի օբյեկտիվությունն ապահովվի, կապվի Արմեն Ավանեսյանի հետ և նրա հետ էլ խոսի: Փայլակ Ֆահրադյանն անձամբ զանգահարել է Արմեն Ավանեսյանին, սակայն վերջինս չի վերցրել հեռախոսը:

Հայկ Հակոբյանը հայտնել է, որ նյութի վրա աշխատել է Փայլակ Ֆահրադյանի հետ համատեղ և, որ նյութի հեղինակը Փայլակ Ֆահրադյանն

է, իսկ հոդվածում լրագրող Արթուր Կարապետյանը դա նույն Փայլակ Ֆահրադյանի լրագրողական կեղծանունն է:

Վերջնական նյութը Փայլակ Ֆահրադյանի հետ հանդիպումներով և հեռախոսազրույցներով ճշտելուց հետո, ուղարկել է Փայլակ Ֆահրադյանին, որից հետո նոր Պալատի նախագահին է մոտեցել ու տեղեկացրել է, որ Լիանա Գրիգորյանն իր բողոքը ցանկանում է նույն կերպ մամուլով հրապարակել, որպես հակակշիռ իր դեմ ներկայացրած բողոքի: Հայկ Հակոբյանը Պալատի նախագահին խնդրել է թույլ տալ այդ բողոքը տեղադրել Պալատի կայքում, ինչը Արա Զոհրաբյանի կողմից մերժվել է՝ ասելով, որ Պալատի կայքը անձնական դիմումների հրապարակման հարթակ չէ:

Հայկ Հակոբյանը նշել է, որ այս հարցն այլևս չի քննարկել և չի ստացել Պալատի նախագահի մերժումը կամ թույլտվությունը, բացի Պալատի կայքում հրապարակելու մերժումից: Հայկ Հակոբյանն էլ գտել է, որ իր լիազորությունների մեջ է եղել փաստաբան Լիանա Գրիգորյանին օժանդակելը, ինչն էլ արել է:

Հայկ Հակոբյանը հայտնել է, որ առաջին հոդվածը պատրաստել է Փայլակ Ֆահրադյանը, իսկ ինքը միայն լրացրել է ֆեյսբուքյան բանավեճի խոսքերը, իսկ երկրորդ հոդվածով մեջ են բերվել միայն Լիանա Գրիգորյանի բողոքում տեղ գտած մտքերը, իսկ մնացած մեկնաբանությունները՝ Փայլակ Ֆահրադյանի կողմից են եղել: Չնայած վերջնական նյութը Հայկ Հակոբյանն է ուղարկել Փայլակ Ֆահրադյանին:

Եզրափակելով իր բացատրությունը՝ Հայկ Հակոբյանը նշել է, որ միտում չի ունեցել որևէ փաստաբանի վնասել կամ վարկաբեկել, իսկ իր կողմից ուղարկված երկու նյութերի հեղինակը պարզ երևացել է, նյութերի մեջ հեղինակի խոսքերի մեջբերումներն են և զրպարտող որևէ տվյալ չկա:

* * *

3. <u>Հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանի բացատրությունը.</u>

Հաշվի առնելով Հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հրամանում նշված փաստերի վերաբերյալ գրավոր բացատրություն է պահանջվել Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի (**այսուհետ՝ ՀՊԳ**) Սյունիքի մարզի Կապան քաղաքի նստավայրի հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանից:

Լիանա Գրիգորյանը 21.10.2015 թվականին Պալատի աշխատակազմի ղեկավարին է ներկայացրել գրավոր բացատրություն, որով xnews.am լրատվական կայքում ***06.07.2015թ. «Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են «գողանում»» վերտառությամբ*** և ***30.07.2015թ. «Ո՞րն է այն շարժառիթը, որ ստիպում է նախկին ամբաստանյալին պատժել իրեն պաշտպանած հանրային պաշտպանին»*** վերտառությամբ հոդվածների հրապարակումների հետ իր առնչությունը ներկայացնելու նպատակով, անհրաժեշտ է համարել հակիրճ ներկայացնել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննված թիվ ՍԴ/0106/01/14 քրեական գործին առնչվող որոշ փաստեր:

Լիանա Գրիգորյանը, մասնավորապես, նշել է, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված որոշման

համաձայն թիվ ՍԴ/0106/01/14 քրեական գործով, դատաքննության փուլում՝ ներգրավվել է որպես մեղադրյալ Արմեն Ավանեսյանի հանրային պաշտպան: Նախաքննության ընթացքում Արմեն Ավանեսյանը ընդունել էր իր մեղքը: Սակայն, դատաքննության ընթացքում Լիանա Գրիգորյանի պաշտպանյալն արդեն չէր ընդունում իր մեղավորությունը և Լիանա Գրիգորյանը՝ որպես վերջինիս պաշտպան, ձեռնարկել է բոլոր միջոցներն իր պաշտպանյալի արդարացման համար:

Գործի քննության արդյունքում Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 19.12.2014թ. դատավճռով Արմեն Ավանեսյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և որպես պատիժ նշանակել ազատազրկում 3 (երեք) ամիս ժամկետով:

Նշված դատավճռի դեմ Լիանա Գրիգորյանի կողմից 2015թ. հունվարին ներկայացվել է վերաքննիչ բողոք, որով վերջինս պահանջել է Արմեն Ավանեսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 19-ի դատավճիռը բեկանել և փոփոխել: Արմեն Ալեքսանդրի Ավանեսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչել անմեղ և արդարացնել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Վերաքննիչ քրեական դատարանը Լիանա Գրիգորյանի կողմից ներկայացրած վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ, իսկ Արմեն Ավանեսյանի պաշտպանությունը իրականացնելու համար 10.03.2015թ. որպես պաշտպան նշանակվել է հանրային պաշտպան Արմինե Ֆանյանը:

Լիանա Գրիգորյանը հայտնել է, որ իր ներկայացրած վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 11.06.2015թ որոշել է՝

1. Պաշտպան Լիանա Գրիգորյանի վերաքննիչ բողոքը՝ բավարարել:

2. Արմեն Ալեքսանդրի Ավանեսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 19-ի դատավճիռ՝ բեկանել և փոփոխել:

3. Արմեն Ալեքսանդրի Ավանեսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 1-ին մասով ճանաչել անմեղ և արդարացնել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

4. Արմեն Ավանեսյանի մասով քրեական գործի վարույթը կարճել, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնել:

5. Ա. Ավանեսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը չհեռանալու մասին ստորագրությունը՝ վերացնել:

6. Դատավճիռը մնացած մասով թողնել անփոփոխ:

Լիանա Գրիգորյանը նաև հայտնել է, որ սոցիալական ցանցերի քննարկումներից իրեն հայտնի է դարձել, որ տվյալ գործով վերաքննիչ դատարանում Արմեն Ավանեսյանը ցանկություն է հայտնել, որ իր շահերը ներկայացնեն փաստաբաններ Երվանդ Վարոսյանն ու Լուսինե Սահակյանը:

Ըստ Լիանա Գրիգորյանի՝ ՋԼՄ-ների և Facebook սոցիալական ցանցում

ամենաքննարկվող թեման փաստաբաններ Լուսինե Սահակյանի և Երվանդ Վարոսյանի՝ Վերաքննիչ դատարանում տարած հաղթանակն էր: ARMENIANS LAWVERS խմբում այդ կապակցությամբ քննարկումներ ծավալվեցին:

Հանրային պաշտպան Թամարա Բաղդասարյանը շնորհավորել է փաստաբաններին հաղթանակի կապակցությամբ, նշելով, որ գործի հանգամանքներն իրեն շատ ծանոթ են, նաև նշել է, որ իր մոտ այնպիսի տպավորություն է, որ հանրային պաշտպանի գրասենյակում այն քննարկվել է: Թամարա Բաղդասարյանի գրառմանն ի պատասխան փաստաբան Երվանդ Վարոսյանը պատասխանել է, որ առաջին ատյանում հանրային պաշտպան է մասնակցել, ինչպես նաև նշել է *«... գնահատական չտամ»* արտահայտությունը: Երվանդ Վարոսյանը նաև նշել էր, որ Արմեն Ավանեսյանի հետ քննարկում են փաստաբանների պալատ դիմելու և հանրային պաշտպանին կարգապահական պատասխանատվություն ենթարկելու մասին հարցը:

Լիանա Գրիգորյանը բացատրությամբ նաև հայտնել է, որ նա՝ Ե. Վարոսյանին պատասխանել է հետևյալ գրառմամբ. *«Ես՝ Սյունիքի մարզի Կապանի նստավայրի հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանս, հանդիսանում եմ ՀՀ ՔՊ հավատարմագրված ԼՂՀ փաստաբան և քննարկվող թեմայի շուրջ հայտնում եմ հետևյալը. Նախ՝ նշեմ, ես մտադրություն չունեի արձագանքելու, սակայն իրադարձությունների ընթացքը ստիպեց փոխել իմ դիրքորոշումը: Նշված գործով ես ներգրավվել եմ դատաքննության փուլում՝ որպես Արմեն Ավանեսյանի պաշտպան, նախաքննության ընթացքում իմ պաշտպանյալը ընդունել էր իր մեղքը, դատաքննության ընթացքում պաշտպանական տակտիկան փոխվեց, իմ պաշտպանյալը արդեն չէր ընդունում իր մեղավորությունը: Ես ընդհանուր իրավասության դատարանում ներկայացրել եմ միջնորդություններ, դատական ճառով պահանջել եմ կարճում/արդարացում: Ստեղծել եմ բոլոր հիմքերը պաշտպանյալիս արդարացման համար: Մեղադրական դատավճիռը ստանալուց հետո կազմել եմ վերաքննիչ բողոք, բողոքի տեքստի հետ ծանոթացրեցի իմ պաշտպանյալին, որից հետո բողոքը ուղարկել եմ ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: Ինձ հայտնի է, որ բավարարվել է իմ վերաքննիչ բողոքը և իմ գործընկերների կողմից այլ վերաքննիչ բողոք չի ներկայացվել:»:*

Լիանա Գրիգորյանը՝ որպես հանրային պաշտպան և որպես Արմեն Ավանեսյանի արդարացման որոշման հիմքում ընկած վերաքննիչ բողոքի հեղինակ, դիմել է Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին, որպեսզի իր խոսքը հանրությանը հասցնի: Դիմելով Հայկին, ուղարկել է իր կողմից կազմված նյութը, որտեղ մեջբերված էին ARMENIANS LAWVERS-ի գրառումները:

Լիանա Գրիգորյանը նշել է, որ 06.07.2015 թվականին ժամը 18:02-ին Xnews.am-ում հրապարակվել է մի նյութ «Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են գողանում» վերնագրով: Հրապարակումից հետո Facebook սոցիալական ցանցում ARMENIANS LAWVERS խմբում տեղադրվել էլ «Փաստաբաններ սիրուն չի» վերնագրով հոդվածը: Այդ հոդվածից հետո Ե. Վարոսյանն իր էջում վիրավորական արտահայտություններ է հրապարակել

հոդվածի պատվիրատուի հասցեին, որն ըստ Լիանա Գրիգորյանի՝ ակնհայտ երևում էր, որ նա է:

Լիանա Գրիգորյանը նաև հայտնել է, որ մտածել է բողոք գրել, բայց այդ պահին դա չի արել, գտնելով, որ այս հարցը կփակվի: Սակայն Ե. Վարոսյանի և Լ. Սահակյանի վստահորդը հրապարակավ դիմել է Պալատ՝ Լիանա Գրիգորյանին պատժելու համար: Նշված նյութը հրապարակվել Pastinfo-ում:

Լիանա Գրիգորյանն էլ իր դիմումն է կազմել և ուղարկել է այն ինչպես պալատ, այնպես էլ Հայկ Հակոբյանին՝ խնդրելով նույնպես հրապարակային ներկայացնել: Լիանա Գրիգորյանը նշել է, որ Հայկն իր դիմումը ներկայացրել է xnews.am- ով:

Ամփոփելով բացատրությունը՝ Լիանա Գրիգորյանը խնդրել է Հայկ Հակոբյանի նկատմամբ վարույթը կարճել, քանի որ իր պատճառով է նա հայտնվել այս վիճակում:

* * *

4. <u>Պալատի մամուլի խոսնակի աշխատանքային գործառույթները.</u>

Հայկ Հակոբյանի և Պալատի միջև 01.11.2013 թվականին կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն վերջինս 01.11.2013 թվականից մինչ օրս զբաղեցնում է Պալատի մամուլի խոսնակի պաշտոնը:

Պալատի նախագահի 13.05.2014 թվականի թիվ 85-Լ հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի աշխատակազմի աշխատողների ծառայողական լիազորությունների (աշխատանքային գործառույթ) շրջանակ»-ի (**այսուհետ՝ Ծառայողական լիազորությունների շրջանակ**) 10-րդ կետի համաձայն մամուլի խոսնակի գործառույթներից են՝ [1]

- ներկայացնում է Պալատի նախագահի և Պալատի խորհրդի պաշտոնական տեսակետները Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների զանգվածային լրատվության և տեղեկատվության միջոցներին.
- կազմակերպում է Պալատի նախագահի հարցազրույցները, հանդիպումները լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ, կազմակերպում և/կամ անցկացնում է ասուլիսները.
- փաստաբանների համար կազմակերպում է ասուլիսներ.
- **փաստաբաններին օժանդակում է լրատվամիջոցների հետ աշխատելու հարցերում.**
- մշակում է Պալատում տեղի ունեցող իրադարձությունների և միջոցառումների վերաբերյալ մամլո հաղորդագրությունները և այլ տեղեկատվական նյութերը.
- զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներին կամ այլ անձանց տալիս է տեղեկատվություն Պալատի գործունեության վերաբերյալ.
- զանգվածային լրատվության միջոցների, Պալատի կայքէջի և սոցիալական ցանցերի միջոցով լուսաբանում է Պալատի, ինչպես նաև փաստաբանների գործունեությունը (արդարացման կամ այլ նախադեպային դատական ակտերի, իրադարձությունները, հաջողությունները).

---

[1] Ներկայումս լիազորությունների շրջանակը նոր խմբագրությամբ սահմանված է Պալատի նախագահի 08.09.2015թ. թիվ 163-Լ հրամանով:

▪ կազմակերպում է Պալատի կողմից տեղեկատվական և իրազեկման միջոցառումները.

▪ փաստաբանների հետ մշտական կապի պահպանում, փաստաբանների խնդրանքով, ինչպես նաև Պալատի նախագահի հաստատած դեպքերում համապատասխան դատական նիստերի լուսաբանման կազմակերպում.

▪ փաստաբանների աղմկահարույց գործերի տեղադրում Պալատի կայքում և լուսաբանում.

▪ **փաստաբանների կողմից իրեն տրամադրվող նյութերի համակարգում և տարածում:**

* * *

5. <u>Կարգապահական վարույթով հաստատված փաստերը.</u>

Հաշվի առնելով սույն կարգապահական վարույթի շրջանակներում Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի և հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանի կողմից ներկայացրած գրավոր բացատրությունները, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով և «Ֆեյսբուք» (Facebook) սոցիալական ցանցում հրապարակված տեղեկությունները (նյութերը), սույն կարգապահական վարույթի արդյունքում հաստատված են համարվում հետևյալ փաստերը՝

1) 11.06.2015թ. www.pastinfo.am լրատվական կայքում հրապարակվել է ***«Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ բավարարեց Լուսինե Սահակյանի ու Երվանդ Վարոսյանի պահանջը. նրանց պաշտպանյալն արդարացվեց»*** վերտառությամբ հոդվածը [2]:

2) «Ֆեյսբուք» (Facebook) սոցիալական ցանցի ARMENIAN LAWYERS խմբում օգտատեր Սոնա Մաշուրյանը (Sona Mashuryan) 11.06.2015թ. ժամը 19:05 րոպեին կիսում է (share) վերոնշյալ հոդվածը, որի հետ կապված ի թիվս այլոց, կատարվում են հետևյալ մեկնաբանությունները՝

▪ հանրային պաշտպան Թամարա Բաղդասարյանը 15.06.2015թ. ժամը 10:21 րոպեին գրառում է. *«Շնորհավորում եմ: Գործի հանգամանքները շատ ծանոթ են, այնպիսի տպավորություն է, որ հանրային պաշտպանի գրասենյակում այն քննարկվել է, հարգելի գործընկերներ սա այլ գործ է, թե.....»* բովանդակությամբ մեկնաբանությունը.

▪ փաստաբան Երվանդ Վարոսյանը 15.06.2015թ. ժամը 10:34 րոպեին գրառում է. *«Թամարա ջան, առաջին ատյանում հանրային պաշտպան է մասնակցել... գնահատական չտամ:»*.

▪ հանրային պաշտպան Սյուզաննա Խչեյանը 15.06.2015թ. ժամը 11:04 րոպեին գրառում է. *«Հարգելի Երվանդ, ես նույնպես աշխատում եմ ՀՊԳ-ում, և այդ քրեական գործի հանգամանքներին, ինչպես նաև առաջին ատյանում մասնակցած հանրային պաշտպանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքին ամբողջությամբ ծանոթ եմ: Ի՞նչ ասել է մասնակցել է հանրային պաշտպան... գնահատականներ չտամ:»* բովանդակությամբ մեկնաբանությունը.

---

[2] http://www.pastinfo.am/hy/node/71953

- փաստաբան Երվանդ Վարոսյանը 15.06.2015թ. ժամը 11:14 րոպեին կատարում է հետևյալ մեկնաբանությունը. *«Սյուզաննա ջան, ասել է այն, որ պաշտպանյալիս հետ քննարկում եմ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Փաստաբանների պալատ դիմելու խնդիրը:»*:

3) 2015թ. հուլիս ամսի սկզբին Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին է դիմել հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանը՝ խնդրելով իրեն օգնել մամուլում հրապարակված *«Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ բավարարեց Լուսինե Սահակյանի ու Երվանդ Վարոսյանի պահանջը. նրանց պաշտպանյալն արդարացվեց»* հոդվածի հետ կապված իր դիրքորոշումը հասարակությանն ու փաստաբանական համայնքի մյուս գործընկերներին հասցնելու համար:

4) «Գալա» հեռուստաընկերության և xnews.am լրատվական կայքի աշխատակից՝ լրագրող Փայլակ Ֆահրադյանը Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի խնդրանքով կազմել է *«Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են «գողանում»»* հոդվածի կառուցվածքը, այդ թվում՝ վերնագիրը և նախաբանը ու հանձնել է Հայկ Հակոբյանին, իսկ վերջինս լրացրել է Լիանա Գրիգորյանից ստացված նյութից տեղեկություններ:

5) Լիանա Գրիգորյանի կողմից Հայկ Հակոբյանին ուղարկված նյութի մեջ մեջբերված են եղել ֆեյսբուքյան հարթակում կատարված գրառումները:

6) 06.07.2015թ. xnews.am լրատվական կայքում հրապարակվել է ***«Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են «գողանում»»*** վերտառությամբ հոդվածը [3]:

7) Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը Լիանա Գրիգորյանի կողմից իրեն դիմելու և xnews.am լրատվական կայքում նյութը հրապարակելուն օժանդակելու մասին Պալատի նախագահին չի տեղեկացրել:

* * *

8) 24.07.2015թ. www.pastinfo.am լրատվական կայքում ***«Պաշտպանը համաձայնել է, որ չհրապարակվի պաշտպանյալին արդարացնող ցուցմունքը՝ պաշտպանյալը բողոք է ներկայացրել նախկին պաշտպանի դեմ»*** վերտառությամբ հոդվածը [4]:

9) Հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանը կրկին դիմել է Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին՝ հայտնելով, որ վիրավորված է փաստաբան Երվանդ Վարոսյանի հրապարակումից և բողոք է ներկայացրել Պալատ և ցանկանում է, որ իր բողոքը նույն կարգով հրապարակվի:

10) Հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանը Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին էլեկտրոնային կարգով տրամադրել է իր բողոքը և խնդրել է այն հրապարակել նաև Պալատի կայքէջում:

11) Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը Լիանա Գրիգորյանի ուղարկված բողոքի հիման վրա Փայլակ Ֆահրադյանի հետ համատեղ նյութ է պատրաստել և այն հրապարակման համար տրամադրել է լրագրող Փայլակ

---

[3] http://xnews.am/arm/news.php?id=7650

[4] http://www.pastinfo.am/hy/node/75224

Ֆահրադյանին: Լրագրող Փայլակ Ֆահրադյանը նյութը պատրաստելու ընթացքում զանգահարել է մյուս կողմ Արմեն Ավանեսյանին, սակայն չի կարողացել կապնվել վերջինիս հետ:

12) Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը Պալատի նախագահ Արա Զոհրաբյանին բանավոր տեղեկացրել է այն մասին, որ Լիանա Գրիգորյանը ցանկանում է մամուլի միջոցով հրապարակել Պալատին ուղղված իր բողոքը, ինչպես նաև նշել է, որ Լիանա Գրիգորյանը ցանկանում է իր բողոքը հրապարակել Պալատի կայքէջում:

13) Պալատի նախագահ Արա Զոհրաբյանը մերժել է Լիանա Գրիգորյանի բողոքը Պալատի կայքէջում հրապարակելու խնդրանքն այն հիմքով, որ Պալատի կայքէջը փաստաբանների մասնավոր դիմումների հրապարակման հարթակ չէ: Պալատի նախագահը միայն տեղեկացված է եղել հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանի կողմից Պալատին ուղղվող բողոքը հրապարակելու մտադրության մասին և Պալատի կայքում այն հրապարակելու հարցում մերժելուց բացի որևէ այլ վարքագծով չի արտոնել կամ չի մերժել դրա հրապարակումն այլ հրապարակային եղանակով:

14) 30.07.2015թ. xnews.am լրատվական կայքում հրապարակվել է ***«Ո՞րն է այն շարժառիթը, որ ստիպում է նախկին ամբաստանյալին պատժել իրեն պաշտպանած հանրային պաշտպանին»*** վերտառությամբ հոդվածը [5]: Հոդվածի հեղինակ նշված Արթուր Կարապետյան անունը դա նույն Փայլակ Ֆահրադյանի լրագրողական կեղծանունն է:

* * *

6. <u>Կարգապահական վարույթով պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հաշվի առնելով Հայկ Հակոբյանի և Լիանա Գրիգորյանի կողմից տրված բացատրությունները, ինչպես նաև կարգապահական վարույթի ընթացքում հաստատված փաստերը՝ գտնում եմ, որ Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն կարգապահական վարույթի հարուցման շրջանակն է xnews.am լրատվական կայքում ***06.07.2015թ. «Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են «գողանում»» վերտառությամբ*** և ***30.07.2015թ. «Ո՞րն է այն շարժառիթը, որ ստիպում է նախկին ամբաստանյալին պատժել իրեն պաշտպանած հանրային պաշտպանին»*** վերտառությամբ հոդվածների (**երկուսը միասին՝ Հրապարակումներ**) հրապարակման հետ Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի՝ առնչություն ունենալու վարքագծի ստուգումը:

Սույն կարգապահական վարույթի շրջանակից ելնելով՝ կարգապահական վարույթի ընթացքում անհրաժեշտ է պարզել հետևյալ հանգամանքները՝

ա) արդյո՞ք Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանն առնչություն ունի Հրապարակումների հետ, եթե այո, ապա ինչո՞ւմ է այդ առնչությունն

[5] http://xnews.am/arm/news.php?id=8262

արտահայտվում.

բ) արդյո՞ք Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի արարքը գործող աշխատանքային օրենսդրության տեսանկյունից հանդիսանում է կարգապահական խախտում, թե՝ ոչ:

* * *

ա) <u>Հրապարակումներին Հայկ Հակոբյանի առնչության հարցի վերաբերյալ.</u>

Ծառայողական լիազորությունների շրջանակի 10-րդ կետից բխում է այն հանգամանքը, որ մեդիա դաշտում վերջինիս «օժանդակության տիրույթում են» բոլոր փաստաբանների խնդրանքները:

Ծառայողական լիազորությունների շրջանակի համաձայն՝ մամուլի խոսնակի համար ***փաստաբաններին լրատվամիջոցների հետ աշխատելու հարցերում օժանդակելն <u>աշխատանքային գործառույթ է</u>՝ ուղղակիորեն սահմանված <u>ի պաշտոնե պարտականություն</u>***:

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում՝ հաշվի առնելով Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի և հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանի բացատրությունները, հաստատվել է այն հանգամանքը, որ Հայկ Հակոբյանն ***<u>առնչություն ունի վերոնշյալ Հրապարակումների հետ:</u>***

Մասնավորապես՝ կարգապահական վարույթով հաստատված փաստերից ուղղակիորեն բխում է, որ՝

- xnews.am լրատվական կայքում 06.07.2015թ. հրապարակված ***«Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են «գողանում»»*** վերտառությամբ հոդվածի մասով Պալատի մամուլի խոսնակ **<u>Հայկ Հակոբյանի առնչությունն արտահայտվում է նրանում</u>**, ***որ վերջինս լրագրող Փայլակ Ֆահրադյանի հետ համատեղ աշխատել է հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանի կողմից հրապարակման նպատակով տրամադրված նյութի վրա:*** Չնայած նրան, որ հոդվածում, որպես լրագրող է հանդես եկել Արթուր Կարապետյան կեղծանունով Փայլակ Ֆահրադյանը, և հոդվածում հիմնականում մեջբերվել են փաստաբանների խոսքերը, միևնույն է հոդվածի վերնագրով և նախաբանով որոշակի բացասական լույսի ներքո են ներկայացվել փաստաբաններ Երվանդ Վարոսյանը և Լուսինե Սահակյանը: Այն, որ Փայլակ Ֆահրադյանը համատեղ մասնակցություն է ունեցել նշված հոդվածի պատրաստմանը հաստատվում է նաև այդ հոդվածը վերջինիս կողմից հեղինակելու և կայքում հրապարակելու վարքագծով:
- xnews.am լրատվական կայքում 30.07.2015թ. հրապարակված ***«Ո՞րն է այն շարժառիթը, որ ստիպում է նախկին ամբաստանյալին պատժել իրեն պաշտպանած հանրային պաշտպանին»*** վերտառությամբ հոդվածի մասով Պալատի մամուլի խոսնակ **<u>Հայկ Հակոբյանի առնչությունն արտահայտվում է նրանում</u>**, ***որ վերջինս փաստաբան Երվանդ Վարոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Լիանա Գրիգորյանի կողմից իրեն հրապարակման նպատակով տրամադրված բողոքը՝ լրագրող Փայլակ Ֆահրադյանի հետ համատեղ աշխատանքի արդյունքում որոշ խմբագրումների ենթարկելով, մամուլի համար նյութ է***

պատրաստել և տրամադրել է լրագրող Փայլակ Ֆահրադյանին՝ կայքում հրապարակելու համար: Ինչպես երևում է նյութից xnews.am-ի լրագրողը փորձել է կապնվել նաև Արմեն Ավանեսյանի հետ *(մեջբերում նյութից. «Xnews.am-ի լրագրողը փորձել է կապնվել Արմեն Ավանեսյանի հետ ճշտելու համար որոշակի մանրամասներ իր դիմումի մասին, սակայն մեր հեռախոսազանգերը մնացին անպատասխան: Մասնավորապես մեզ հետաքրքրում էր, թե ինքը անձամբ ծանոթ է այդ տեքստի բովանդակությանը, կամ ո՞ր լրատվամիջոցներին է նա ուղարկել այդ նամակը, ո՞ւմ միջոցով, կամ վերջիվերջո, ո՞րն է այն շարժառիթը, որ ստիպում է նրան պատժել հանրային պաշտպանին»:)*: **Հետևաբար՝ երկրորդ հոդվածի հարցում, լրագրողի անմիջական մասնակցությունը նույնպես ակնհայտ է:** Այս իրավիճակում Հայկ Հակոբյանը պատրաստել է հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանի դիրքորոշումը և հիմնավորումները ներկայացնող նյութ, որի հիմքում ընկած է հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանի բողոքը՝ ուղղված Պալատի նախագահին: Հայկ Հակոբյանի կողմից պատրաստված և լրագրողին տրամադրված նյութի բովանդակությունից հստակ երևացել է այդ նյութի հեղինակը՝ հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանը, որի անունից էլ, ըստ էության, ներկայացված է եղել նյութը: Պալատի նախագահը միայն տեղեկացված է եղել հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանի կողմից Պալատին ուղղվող բողոքը հրապարակելու մտադրության մասին և Պալատի կայքում այն հրապարակելու հարցում մերժելուց բացի որևէ այլ վարքագծով չի արտոնել կամ չի մերժել դրա հրապարակումն այլ հրապարակային եղանակով:

* * *

բ) <u>Հայկ Հակոբյանի արարքի՝ կարգապահական խախտում հանդիսանալու հարցի վերաբերյալ.</u>

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում պարզման ենթակա է հաջորդ հարցադրումն առ այն, թե ***արդյո՞ք Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի արարքը գործող աշխատանքային օրենսդրության տեսանկյունից հանդիսանում է կարգապահական խախտում, թե՝ ոչ:***

Նշված հարցադրմանը պատասխանելու համար սույն որոշման 6-րդ կետի «ա» ենթակետում հաստատված փաստերը, մասնավորապես՝ աշխատանքային գործառույթների իրականացման ընթացքում Հրապարակումներին Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի առնչությունն, անհրաժեշտ է դիտարկել աշխատանքային օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահության իրավակարգավորման համատեքստում:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *աշխատանքային կարգապահությունն աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերով, գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված վարքագծի կանոններն են, որոնց պարտավոր են ենթարկվել բոլոր աշխատողները:*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի համաձայն՝ *աշխատանքային կարգապահության խախտում է համարվում աշխատողի մեղքով աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:*

Անդրադարձ կատարելով Հրապարակումներին Հայկ Հակոբյանի առնչության և իր աշխատանքային գործառույթների կապին, հարկ է արձանագրել, որ Ծառայողական լիազորությունների շրջանակի համաձայն՝ մամուլի խոսնակի համար հանրային պաշտպաններին լրատվամիջոցների հետ աշխատելու հարցում օժանդակելու աշխատանքային գործառույթն իր մեջ կարող է ներառել առօրյա բնականոն աշխատանքի հետ կապված ցանկացած գործողություն՝ սկսած մամուլի խոսնակի կողմից հանրային պաշտպանին լրագրողի հեռախոսահամար կամ այլ կոնտակտային տվյալ փոխանցելուց մինչև նյութի մշակում և/կամ խմբագրում և մամուլի ասուլիսի կամ հարցազրույցի կազմակերպում:

Հրապարակումներից բխում է, որ դրանցում քննարկվում է միևնույն քրեական գործով պաշտպանյալի շահերը դատական քննության տարբեր փուլերում ներկայացրած փաստաբանների միջև մասնավոր տարաձայնություն: Ընդ որում՝ «վիճող կողմերից» մեկը հանդիսանում է հանրային պաշտպան:

Թեև Հրապարակումներն իրականացվել են մամուլի խոսնակի աշխատանքային գործառույթների շրջանակներում լրագրողի հետ համատեղ աշխատանքի արդյունքում, այդուհանդերձ՝ հարկ է նշել, որ հաշվի առնելով առաջին նյութում հանրային պաշտպանի հակադիր կողմում գտնվող փաստաբանների՝ բացասական լույսի ներքո ներկայացված լինելու հանգամանքը, ապա մամուլի խոսնակը պարտավոր էր դրսևորել հավասարակշռություն:

Հայկ Հակոբյանի բացատրությունից բխում է, որ վերջինիս կողմից Լիանա Գրիգորյանին՝ լրատվամիջոցների հետ աշխատելու հարցում օժանդակություն ցույց տալու հիմքում ընկած են եղել հետևյալ բարոյական և իրավական կողմերը.

- ***բարոյական ասպեկտով՝*** Հայկ Հակոբյանն արդար չի համարել Լիանա Գրիգորյանի դեմ Երվանդ Վարոսյանի վարքագիծը, փորձել է ձեռք մեկնել օգնության խնդրանքով իրեն դիմած, վիրավորված կին-գործընկերոջը, ինչպես նաև գիտակցել է, որ հեռավոր մարզում աշխատող փաստաբանին դժվար է լինելու մեդիա դաշտում ապացուցել, որ ինքը ճիշտ է.
- ***իրավական ասպեկտով՝*** Հայկ Հակոբյանը ղեկավարվել է այն հանգամանքով, որ Լիանա Գրիգորյանը հանդիսանում է իր աշխատանքային գործընկերը, Պալատի աշխատակիցը՝ ՀՊԳ Սյունիքի մարզի Կապան քաղաքի նստավայրի հանրային պաշտպանը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 220-րդ հոդվածի համաձայն՝ *աշխատանքային կարգապահության խախտում է համարվում **<u>աշխատողի մեղքով</u>** աշխատանքային պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը:*

Նույն օրենսգրքի 224-րդ հոդվածը սահմանում է, որ *կարգապահական տույժի կիրառման դեպքում պետք է հաշվի առնվեն խախտման ծանրությունը*

և դրա հետևանքները, աշխատողի մեղքը, այդ խախտման կատարման հանգամանքները և աշխատողի՝ նախկինում կատարած աշխատանքը:

Վերոնշյալ իրավական նորմերից բխում է, որ ինչպես ցանկացած կարգապահական զանցանքի դեպքում պատասխանատվության հարցը քննարկելիս, այնպես էլ աշխատանքային կարգապահական վարույթում, կարգապահական պատասխանատվության հարցը լուծելու և կարգապահական տույժ ընտրելու հարցում կարևորվում է կարգապահական խախտում թույլ տված անձի սուբյեկտիվ կողմը բնութագրող ***մեղքի հատկանիշը***:

Մեղքն անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարվող արարքի և դրա հետևանքների նկատմամբ:

Թեև աշխատանքային օրենսդրությունը չի մասնավորեցնում մեղքի ձևերը, այդուհանդերձ մեղքի ընդհանուր տեսության համաձայն՝ մեղքը կարող է դրսևորվել ***դիտավորության և անզգուշության ձևով:***

Նման պայմաններում կարելի է արձանագրել, որ Հայկ Հակոբյանի արարքը պարունակում է անզգուշության ձևով մեղքի դրսևորում այն առումով, որ վերջինս փաստաբանների մասնավոր վեճի վերաբերող Հրապարակումներին մասնակից դառնալու արարքը կատարելիս ***չի կանխատեսել*** իր արարքի հետևանքների առաջացման հնարավորությունը, թեև տվյալ իրավիճակում ***կարող էր*** և ***պարտավոր էր*** կանխատեսել դրանք:

Հայկ Հակոբյանի աշխատանքային գործառույթի մասն են կազմում՝

- փաստաբաններին լրատվամիջոցների հետ աշխատելու հարցերում օժանդակելը.
- փաստաբանների կողմից իրեն տրամադրված նյութերը համակարգելը և տարածելը:

Մամուլի խոսնակի գործառույթ հանդիսացող փաստաբաններին օժանդակելը (ինչպես և ցանկացած գործառույթ) առաջին հերթին պետք է իրականացվի ***բարեխիղճ***, ինչից բխում է, որ որևէ պարագայում մեկ փաստաբանին ցուցաբերված օժանդակությունը չպետք է ուղղված լինի մեկ այլ փաստաբանի դեմ կամ բացասական լույսի ներքո ներկայացնի վերջինիս:

Նման պայմաններում Հայկ Հակոբյանը մամուլի հետ կապի ապահովման հարաբերություններում, հատկապես, երբ դրանց հիմքում ընկած է փաստաբանների տարաձայնություն (մասնավոր վեճ) պարտավոր էր պահել հավասարակշռությունը՝ անկախ փաստաբանի սեռից, գործունեության վայրից, հարցի ինչեղությունից, հանրային հետաքրքրությունից կամ որևէ այլ հանգամանքից:

Նշվածը համադրելով սույն կարգապահական վարույթով հաստատված փաստերի հետ՝ հարկ է արձանագրել, որ Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի կողմից չպետք է օժանդակություն ցուցաբերվեր հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանին, «ի վնաս» փաստաբաններ Երվանդ Վարոսյանի և Լուսինե Սահակյանի:

Հայկ Հակոբյանն ընդունել է, որ հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանին օգնելիս՝ իրեն քաջ հայտնի է եղել խնդրի էությունը և այն, որ Լիանա Գրիգորյանը ցանկանում է պատասխանել մեկ այլ փաստաբանի՝ Երվանդ Վարոսյանի կողմից կատարված հրապարակումներին:

Տվյալ դեպքում Հայկ Հակոբյանը՝ տեղեկացված լինելով Լիանա Գրիգորյանի կողմից հրապարակվող տեղեկատվության բնույթին, առնվազն պարտավոր էր պահպանել հուզական չեզոքություն և հրաժարվել որևէ օժանդակություն ցուցաբերելուց:

Նման պայմաններում Հայկ Հակոբյանը բարեխիղճ չի կատարել իր՝ վերը նշված գործառույթները, օժանդակելով փաստաբաններից մեկին մյուսի դեմ հրապարակում **տարածելու հարցում:**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *աշխատանքային կարգապահությունը խախտելու համար կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերի հիմքերով աշխատանքային պայմանագրի լուծում:

Հաշվի առնելով Հայկ Հակոբյանի նախկինում պատասխանատվության ենթարկված չլինելու հանգամանքը, ինչպես նաև զանցանքի բնույթը, գտնում եմ, որ Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի նկատմամբ պետք է կիրառել ***«նկատողություն» կարգապահական տույժը:***

Նկատի ունենալով, սույն խնդրի վերաբերյալ հանրային հետաքրքրությունը՝ գտնում եմ, որ սույն հրամանը պետք է հրապարակել նաև Պալատի կայքէջում:

Ելնելով վերոգրյալի և ղեկավարվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի, 27-րդ հոդվածի, 215-րդ հոդվածի 2-րդ մասի, 220-րդ և 222-րդ հոդվածների, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 224-րդ հոդվածի պահանջները,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի նկատմամբ որպես կարգապահական պատասխանատվության միջոց՝ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

3. Սույն հրամանը հրապարակել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի աշխատակազմի
ղեկավար՝ Մանե Կարապետյան

29 հոկտեմբերի 2015թ.
թիվ 206-Ա
ք. Երևան